

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Արա Բարդոյանի, Հերմինե Նաղդայանի, Էդուարդ Շարմազանովի, Գագիկ Մինասյանի, Մկրտիչ Մինասյանի, Արտակ Դավթյանի, Արփինե Հովհաննիսյանի, Կորյուն Նահապետյանի, Արտակ Զաքարյանի, Ալեքսանդր Արզումանյանի, Մնացական Մնացականյանի, Տաճատ Վարդապետյանի, Նաիրա Կարապետյանի, Արայիկ Հովհաննիսյանի, Կարինե Պողոսյանի, Ռուզաննա Մուրադյանի, Իշխան Խաչատրյանի, Արրահամ Մանուկյանի, Մանվել Բաղեյանի և Կարեն Ավագյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-198-29.01.2013-ԱՄ-010/0) վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված լրացումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգը, ինչպես նաև շահառուներին ներկայացվող պահանջները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկության ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանը:

Ներկայացված օրենքի նախագծի ընդունման դեպքում՝ ընդունումից հետո դրա կատարումն ապահովող «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը կընդունվի 9-ամսյա ժամկետում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ**

**«Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական
իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման
դեպքում**

1. Նախագծի կարգավորման արդյունքները.

Ըստ օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման, առաջարկվող նախագծի ընդունման դեպքում կարգավորման արդյունքները կլինեն հետևյալը.

1) նախագծի ընդունման դեպքում սոցիալապես առավել խոցելի, մասնավորապես պետության կողմից աղքատության նպաստ ստացող, անպտղության խնդիրներ ունեցող ընտանիքների համար վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման մատչելիության բարելավման շնորհիվ որոշակիորեն կնվազի անպտղության ցուցանիշը, կկրճատվի անպտղ ընտանիքների թիվը, արդյունքում կբարելավվի ծնելիության ցուցանիշը:

2) օրենքի ընդունումը, հաշվի առնելով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների բարձր ինքնարժեքը, կհանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի զգալի ավելացմանը, որի համար Հայաստանի Հանրապետության 2013թ. պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի «Առողջապահություն» բաժնով միջոցներ նախատեսված չեն:

2. Նախագիծը չընդունելու դեպքում առողջապահության բնագավառի վրա ազդեցության գնահատման արդյունքները.

Նախագիծի չընդունման դեպքում նշված սոցիալապես անապահով ընտանիքներում սպասվող անպտղության ցուցանիշի նվազեցում և հետևաբար ծնելիության ցուցանիշի բարելավում չի արձանագրվի:

3. Վերարտադրողական առողջության բնագավառում վարվող քաղաքականության, ինչպես նաև համեմատական վիճակագրական տվյալները.

Հայաստանի Հանրապետությունում, համաձայն ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի տվյալների, վերարտադրողական տարիքի յուրաքանչյուր վեց կնոջից մեկը տառապում է անպտղությամբ (16.8%), ինչը ԱՀԿ կողմից սահմանված ճգնաժամային ցուցանիշից բարձր է շուրջ 1.8%-ով: Տղամարդկանց մոտ անպտղության ցուցանիշը կազմում է 5.2%,

4. Նախագծի կիրարկման արդյունքում կանխատեսող հետևանքները գնահատելու ժամանակացույցը.

Նախագծի ընդունումից հետո կանխատեսվող հետևանքները հնարավոր կլինի գնահատել կիրարկումից հետո 3 տարի անց:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ *Նախագծով հստակեցվում է անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմանը բժշկական օգնություն և սպասարկում ստանալու կարգը:*

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

**«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում
կարգավորման ազդեցության գնահատման**

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը կնպաստի վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ սոցիալապես առավել խոցելի խմբերին բժշկական օգնության և սպասարկման հասանելիության ապահովմանը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական
իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
բնապահպանության բնագա-
վառում կարգավորման

1.«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական
իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
վերաբերյալ**

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական
իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ
Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի
«Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում
կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու
մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ
կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

“Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին> N 18-Ն որոշման և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի <Սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին ենթաոլորտների բնութագրիչները հաստատելու մասին> N 34-Ա/1 հրամանի համաձայն:

Նախագիծը՝

ա/ ուղղակի կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն:**

բ/ շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ ունի **դրական ազդեցություն:**

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում
կարգավորման ազդեցության գնահատման

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարության 19.02.2013թ. N ԴԴ/03.1/1626-13 գրությամբ ներկայացված մոտավոր հաշվարկների, 2013 թվականին (միայն ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված ընտանիքների զույգերին վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման համար) կառաջացնի լրացուցիչ բյուջետային հատկացումներ 1,150.0 մլն դրամի չափով (իսկ հաջորդ երեք տարիներին՝ յուրաքանչյուր տարվա համար 10% աճ), որը նախատեսված չէ ինչպես ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով, այնպես էլ ՀՀ 2013-2015 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2014-2015թթ. համար:

Պ-198-29.01.2013-ԱՄ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈԴՎԱԾ 1. «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքի (այսուհետեւ՝ Օրենք) 6-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր «7-րդ» մասով.

«7. Կինն իրավունք ունի անվճար կամ արտոնյալ պայմաններով ստանալու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն եւ սպասարկում՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:»:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր «5-րդ» մասով.

«5. Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության եւ սպասարկման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014թ. հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

«Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ սոցիալապես առավել խոցելի խմբերին բժշկական օգնության եւ սպասարկման հասանելիության ապահովման, ծնելիության խթանման եւ ժողովրդագրական իրավիճակի բարելավման անհրաժեշտությամբ:

Գրեթե բոլոր Եվրոպական երկրներում առկա են ժողովրդագրական խնդիրներ եւ այդ երկրների կառավարությունները տարբեր քայլեր են ձեռնարկում ուղղված ծնելիության մակարդակի բարձրացմանը՝ բժշկական ծառայությունների հասանելիության ապահովում, բազմազավակ ընտանիքներին ֆինանսական աջակցություն, երրորդ եւ ավելի երեխաների դեպքում նպաստի հատկացում, եւ այլն:

Հայաստանը եւս դասվում է ցածր ծնելիությամբ երկրների շարքին: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2011թ. 1000 բնակչի հաշվով ծնելիության ցուցանիշը կազմել է 13.3, իսկ բնակչության բնական աճը՝ 4.7: Հարկ է նշել, որ 2010թ. համեմատությամբ, վերոնշյալ երկու ցուցանիշները նվազել են 0.5-ով: Ըստ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի տվյալների, Հայաստանում բնակվող վերարտադրողական տարիքի յուրաքանչյուր վեց կնոջից մեկը տառապում է անպտղությամբ (16.8%), ինչը ԱԿ-ի կողմից սահմանված ճգնաժամային ցուցանիշից բարձր է շուրջ 1.8%-ով:

Զարգացած երկրներում, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունը եւ սպասարկումը կիրառվում է անպտղության տարբեր տեսակների դեպքում: Հարկ է նշել, որ այդ տեխնոլոգիաների կիրառումը փոկային գործընթաց է եւ պահանջում է զգալի ֆինանսական միջոցներ, հետեւաբար հասանելի չէ բնակչության բոլոր խավերի՝ մասնավորապես անապահով ընտանիքների զույգերի համար:

Հաշվի առնելով Հայաստանում ստեղծված ժողովրդագրական իրավիճակը եւ այն բարելավելու անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք կատարել համապատասխան լրացումներ «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Նախագծի ընդունումը կնպաստի վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ սոցիալապես առավել խոցելի խմբերին՝ բժշկական օգնության եւ սպասարկման հասանելիության ավելացմանը, որն իր հերթին կնպաստի Հայաստանում ծնելիության մակարդակի բարձրացմանը, ընտանիքների պահպանմանը եւ ժողովրդագրական ցուցանիշների բարելավմանը: Նախագծի ընդունումը հնարավորություն կտա ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված ընտանիքների զույգերին (ընտանիքի անապահովության 30.00 եւ ավելի միավորի դեպքում), ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով, առնվազն մեկ անգամ անվճար օգտվելու նշված ծառայությունների ամբողջական փաթեթից (հետազոտում, բուժում եւ բեղմնավորում): Սոցիալական այլ խմբերում ընդգրկված ընտանիքների զույգերը, պետական նպատակային ծրագրի շրջանակներում, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության եւ սպասարկման արտոնություններ կունենան հղիությամբ ավարտված դեպքերի պարագայում: